


Он приехал,

1829

Успехов/а мз 2/45.



Р/1817у
1899

391.71-93
0-71

ՏԻՐՈԼԱՅԻ ԱՂՋԻԿ

Ժողովրդական առանցութիւն

(ՕՍՏՐՈԳ-ՕՐԾԿԱԽ ՓՈՂՈՎՐՃԱԿԻՑ)

Ժ Լ Ե Տ

ԳԵՐԵԳ ԿՐԵԲԵՐ

2003

Թարգմանեց
Տիրուհի Կոստանեանց

Թ Ի Ֆ Լ Ի Ս

բան Մ. Շարամէ, Նիկ փ. առ. 21

1894

391.715
0-71

891.715

5683

0-71

ՏԻՐՈԼԱՑԻ ԱՂՋԻԿ

Ժողովրդական առանձութիւն

(ՕՍՏՐՈԳ-ՕՐՄԱՆԻ ԺՈՂՈՎԸՆ-ՈՒԻՑ)

Ժ Լ Ա Տ

ԳԵՐԳԻ ԿՐԱԲԲԻ

1002
4740
4740

Թարգմանեց

Ց Ի Ր Ո Ւ Ի Կ Կ Ո Ւ Մ Ա Ն Կ Ե Ա Ծ



Տպ. Մ. Շարամճիկ. || Տիպ. Մ. Ռարած.

1894

Дозв. цензур., Тифлисъ, 8 Марта 1894 г.

ՏԻՐՈԼԱՅԻ ԱՂՋԻԿԻ

Առաջին ակտուն առանդութիւն

(Օսմանյական ժողովածուից)



օգէնի լիճը շրջա-
պատուած է ժայռոտ
լեռներով: Նորա հա-
յելու պէս փալուն,
կապոյտ ջրերի մէջ
ցոլում են երկնքի
պսպղուն աստղերը և ամեն
մէկ ամպը կարծես վազում է
լճի վերայով:
Կէս զիշեր է. երկինքը նայում է

քնած ու գեղեցիկ Բըեգնէց քաղաքի վերաբ, որը գտնվում է Տիրոլեան ափին:

Հին քաղաք է դա. հազար տարի է, որ կանգնած է սիրուն լճի մօտ:

Նատ հին ժամանակներից նորա աշտարակների ու պատերի ստուերները համարեա ծածկում են ժայռոտ լեռները: Եւ որոնք որ ապրում են այդ քաղաքում, նոքա ամենքն էլ գիտեն այն աւանդութեան մասին, թէ ինլաէս 300 տարի առաջ գիշեր ժամանակ ազատուեց Բըեգնէց քաղաքը:

Մէկ Տիրոլացի խեղճ աղջիկ, հեռու իւր հայրենիքից ու բարեկամներից, գնաց իրան համար հաց ճարելու: Նա գնաց, հեռացաւ Զուիցերիայի հովիտները և այնտեղ աղախնութիւն անելով, իրան աշխատանքով ապրում էր: Եւ տարիներ անցնելուց յետոյ հայրենիքի լիշտակը թուլացաւ նորա սրտում:

Նա բարի մարդկանց մօտ մտաւ և ծառալում էր շատ սիրով ու հաւատար-

ժուլթեամբ: Նա սովորեց զուիցերիացիներին և նոքա արդէն իրան մօտիկ մարդիկ էին համարվում: Եւ երբ նա հօտը քշում էր արօտն արածացնելու, էլ չէր նայում այն կողմը, որտեղ Բըեգնէց քաղաքն էր գտնվում:

Նա էլ այս քաշելով չէր լիշում Բըեգնէցը. մոռացաւ իւր հայրենիք Տիրոլը: Նա չէր լսում աւստրիական պատերազմի մասին տարեածուած լուրերը և օրբստորէ աւելի ուրախ և հանգիստ զարթնում էր իւր նոր ու խաղաղ հայրենիքի գրկից: Այդպէս ահա անցնում էր նորա կեանքը սիրուն զուիցերիական հովտում:

Յանկարծ պատերազմի նշաններ երեցան, Անքաղել մնացին ոսկի արտերը. զուիցերիացիներն անդադար հաւաքվում էին իրար մօտ և տաք տաք խօսում էին մի ինչ որ բանի մասին:

Մտածմունքի մէջ ընկած և մուալլէին տղամարդիկ. նոցա բարկացած աչ-

քերը գետնին էին նայում։ Կանալք անհանդիսա կերպով իրար հետ փսփսում էին. նոքա չէին մտածում ոչ մանելու և ոչ էլ կտաւ գործելու մասին։ Իսկ երեխաները փախենում էին դաշտ գնալ վազգելու և զուարթանալու համար։

Ահա մէկ օր բոլոր տղամարդիկ հաւաքուիցին դաշտում. հարևան քաղաքից նոյս մօտ եկան գանազան անծանօթմարդիկ. Թոքա բարձր ձայնով խօսում ու վիճում էին և անհանդիսա կերպով նայում էին լճի վերալ։

Երեկոյեան կրկին հաւաքուեցին։ Հեռացան նոյա կասկածն ու վախը։ Հեռուից լսում էր նոյա աղմկալի խօսակցութեան ձայնը. Գիւղական տանուտէրը վեր կացաւ և բաժակը ձնու քում բռնած ասաց։

Խմենք անիծուած թշնամու յաղթուելու համար. ահա արդէն գիշերը մօտ է. երբ նոր առաւօտ ծագէ, թշնամու բերդը, Բրեգնէցը, մեր ձեռքում կըլինի։

Բոլոր կանանց երեսներին վախ ու հպարտութիւն էր երեսում։ Իսկ խեղճ տիրոլացի աղջկայ սիրոը ճմլվում էր այդ խօսքերը լսելիս։

Տեսնում է նա հեռուում իւր գեղեցիկ ու հայրենի քաղաք Բրեգնէցը, նորա բարձր աշտարակները։ Նա չունի մօտը ոչ ընկեր, ոչ բարեկամ. նորա չորս կողմն իւր սիրելի հայրենիքի թշնամիներն են։ Յանկարծ գարթեցին նորա մէջ երեխայական յիշողութիւնները։ Մտաբերեց նա իւր բարեկամներին ու ծանօթներին, որոնցից նա բաժանուել էր մի կտոր հաց ճարելու համար։ Նորա ականջնեբում կարծես լսվում էին Տիրուլական սարերի մալրենի ու քաղցր երգերը…

Էլ ոչինչ չի լսում նա, թէե հեռուում շարունակվում են վայրենի աղաղակները։ Զի տեսնում նա զուիցերիական կանաչ արտերն ու սիրուն հովիտները։ Միայն մէկ բան է երեսում նորա

աչքերին՝ հայրենի քաղաքը. և դէպի հայրենիքն զգացած սիրոյ գաղտնի ձայնը կարծես շշնջում է նորան. «գնա ազատէ Բրեգնէցը. նախազգուշացնուր վըտանդի մասին»:

Նտապում է նա թեթև քայլերով... Ահա գոմը. նա գուրս է հանում այնտեղից լաւ ու վազկան ձին, որն ինքն, իւր ձեռքով է կերակրել. և շփելով նորան, հեծնում է վրէն և քշում է դէպի իւր սիրելի երկիրը:

Արագ վաղում է ձին գիշերուայ մը-թութեան մէջ: Ահա արդէն կանաչ արօտն ու շագանակի անտառը հեռու մը-նացին: Առջևից գետը կատաղի ձայներ է հանում: Այդ ի՞նչ դանդաղ է առաջ գը-նում աղջիկը: Միթէ ամակերը կ'անցկաց-նեն նորան ալդ ալիքների միջից...

Նուտնի, չէ կարելի ուշանալ. ար-դէն Բրեգնէցի եկեղեցու զանգակը խը-փում է տասն և մէկ ժամը: «Աստուած իմ, փրկէ Բրեգնէցը, խաղաղեցրո՞ւ ալիք-

ները». աղօթում է նա: Բայց գետն ա-ւելի է փրփրում ու կատաղում և կար-ծես եփում են նորա ալիքները: Նա-յում է աղջիկը մթութեան մէջ. բաց է թողնում սանձերը: Ընկնում է ձին ջրի մէջ, իւր կրծքով պատառում է ջուրը, քաջութեամբ լողում, կռվում է սարսա-փելի ալիքների հետ. և քիչ էլ, ահա փայլում են հայրենի քաղաքի կրակները: Բայց ափը բարձր ու դիք է. վախեցած ձին խրխնջում է. աղջիկը պառկում է նորա բաշի վերայ: Բոլոր ուժով, խելօք ձին վազում է դէպի առաջ և մի ակն-թարթում աղջկան ափն է հանում:

Եւ նա քշում է ձին դէպի Բրեգ-նէցի բարձր պատերը: Ահա արդէն դար-պասին մօտ է և արդէն տասներկուսը խփում է: Նորա աղաղակից գուրս են վա-զում զինուորները, լսում են իրանց հաս-նող վտանգի մասին:

Զինսւորները զբահաւորուած կանգ-նում են ամուր պատերի վերայ. և լու-

սաղէմին թշնամիները ջարդուած ու
յաղթուած էին:

Եւ յաւիտենական փառքով պսա-
կուեց հալրենիքի փրկիչ Տիրոլացի Աղ-
ջիկը:

Արդէն 300 տարի է անցել այն ժա-
մանակից, բայց բլուրի վերայ կանգնած
է նորա արձանը: Այնտեղ հաւաքվում են
Բրեգնեցի աղջիկները և նայում են քաջ
ու հալրենասէր ձիաւոր աղջկայ վերայ:
Եւ գիշերապահը քաղաքում շրջելիս կան-
չում է «ինը» «տասը» «տասնեմէկ» բայց
չէ ասում «տասներկու» այլ այդ ժամին
նա արտասանում է Տիրոլացի Աղջկայ ա-
նունը, որ բոլորը նորան միշտ լիշեն:

ԺԼԱՏ

ԳԻՈՐԴ ԿՐԸԲԲԻ:



ալրում էր երթեմն մէկ
վաճառական իւր
կնոջ և երեխաների
հետ: Նոքա շատ
լաւ ապրուստ ու-
նէին և ոչ մի բա-
նի կարօտութիւն
չէին քաշում: Բայց
երբ վաճառականի կինն ու երեխաները
մեռան, նա սկսեց փող հաւաքել ու տղ-
քատի պէս ապրել և այդ պատճառով

նորա անունը դբին ժլատ: Նա ամենա-
հասարակ կերակուրներ էր ուտում և շո-
րեղը մինչև որ բոլորովին չքրքրուէին,
նա վրայից չէր հանում: Այդ վաճառա-
կանի հետ միասին ապրում էր և նորա
ազգական մի կին, որը նոյնպէս սիրում
էր փող գիզել ու ժլատ ապրել: Մրցե-
լով իրար հետ ժլատութեան մէջ, նոքա
երկուսն էլ վեցջտպէս վճռեցին իրանց
վերայ չափազանց քիչ ծախսել: Նոքա իրանց
սեղանից ոչ մի հացի փշրանք չէին տա-
լիս աղքատի: Աղքատներն այդ ժլատ վա-
ճառականին հանդիպելիս, իրանց ընկերն
էին համարում. իսկ հարուստ տանտէ-
րերի շները, որ սովոր էին պատռտուած
շորերով մարդկանց վերայ հաչել, յար-
ձակում և ընկնում էին նորա յետեից
ամեն մէկ դռան տակից: Հարեանները
չգիտէին՝ ժլատ վաճառակտնին խղճան,
թէ նախանձին և նորան պատահելիս
արդեօք յարգանք ցոլց տան, թէ արհա-
մարանք:

Բայց թէ մեր հարուստ վաճառա-
կանը, որ արտաքուստ աղքատից էլ ա-
ւելի վատ էր երևում, շուտ շուտ մի ինչ
որտեղ էր գնում, նորա ճանապարհոր-
դութիւնը շատ անգամ ծածուկ չէր մը-
նում: Գիշերները նա այցելում էր աղ-
քատներին և շատ անգամ զրկուելով մեծ
դումարից, մի անգամից խեղճ մարդուն
ոտի էր կանգնեցնում և ապահովացնում
էր նորա դրութիւնը: Նատ, շատ անգամ
նա այնքան փող էր ընծալում, ուրիշնե-
րին, որ գորանով կարող էր ինքը հիա-
նալի ապրել և արծաթէ ամաններով կե-
րակուրներ ուտել: Եւ յաճախ մի որ և է
հետաքրքիր մարդ տեսնում էր մեր ժլա-
տին, որը վերադառնում էր տուն աղ-
քատների ու թշուառների մօտից: Ժլատը
փող էր հաւաքում բաժանելու համար,
նա տանը մենակ նստած պաս էր պա-
հում, բայց դորա փոխարէն մի որ և է
աղքատ ու այրի կին իւր որեերով հա-
մով ու քաղցր բաներ էր ուտում նորա-

տուած փողով։ Զմրան գիշերները նա գնում էր հեռու իւր դործին և մխիթարվում էր տեսնելով անօգնական ու թշուառ ընտանիքների ուրախութիւնն ու երջանկութիւնը, որոնց նա ազատել էր աղքատութիւնից և ուրախութեան արտասուքները կաթում էին նորա աչքերից, չնայելով նորա խիստ կերպարանքին։ Եւ երբ ժլաաը վերադառնում էր տուն, նորա ձիւնի նման սպիտակ մաղերը միանակ անցորդի գաղտնիքը բաց էին անում։

Նա արդէն 70 տարեկան էր, երբ գիւղի հիւսիսալին կողմում մի մեծ ու գեղեցիկ շինութիւն բարձրացաւ։ Եթէ որ կարելի լինէր հարեանների աչքերը կուրացնել, այն ժամանակ ոչ ոք չէր տեսնի, թէ ինչպէս էր այդ շինվում։ Տասն և երկու սենեակ շինուած էր իրար մէջ, իսկ վեց սենեակ էլ կար միւս կողմում։ Դոյց մի քանիսը տղամարդկանց, իսկ միւսներն էլ աղքատ ու ազնիւ պա-

ռաւ կանանց համար էին։ Տան յետի կողմում փոքրիկ պարտէզներ կային նըստարաններով և ստուերոտ ծառուղիներով։

Այդ մեծ տունը, որ նա շինել էր և ապագալի համար էլ ապահովել էր իւր երկրի չքաւոր ու ծեր մտրդկանց համար, չէր ուզում ինքը կառավարել։

«Ընարեցէք, ասաց նա այդ մասում ընակսւողներին, ձեր միջից ամենալաւերին և ընդունակներին։ Թող նոքա կառավարեն ալդ աղքատանոցը և կարդ ու կանոնի մէջ պահեն»։

Այդպէս էլ արին։ Ելի մի քանի տարի ապրեց այդ ժլատը, որը մոռացել էր բոլոր իրան լարմարութիւնների մասին և մխիթարութիւն գտնում էր միայն աղքատների ու կարօտեալների ուրախութեան մէջ։

Մեռաւ ժլատը։ Բայց նորա լիշատակը մինչև օրս էլ չէ մեռել։ Աղքատանոցի դահիճում, համեստ զորգերի և մինչև անդամ մի քանի շուալ առարկաների հետ

միասին կախուած է բարի և մեծահոգի
ծերունու պատկերը:

Դահլիճում ման են գալիս ծեր կա-
նայք ու տղամարդիկ, ոլոնք առաջ շատ
խեղճ էին, իսկ հիմայ կուշտ ու տաք հագ-
նուած են, ոչ մի նեղութիւն չեն կրում
և ունին ամեն բան, ինչ որ հարկաւոր
է ապրելու համար:

Եւ նալելով ծերունու պատկերի վե-
րայ, նոքա ամենքն էլ օրհնելով և ար-
տասուքն աչքերին, պատմում են նորա
մասին, որն իւր կենդանութեան ժամա-
նակ այնքան սիրում և մխիթարում էր
անտուն, անտէր աղքատներին ու դըժ-
բախտներին:



18d9

Նոյն թարգմանչինն է

1.	Յովհան Գուտտենբերգ	.	.	—	15
2.	Գոքտոր Զէններ	.	.	—	20
3.	Մանկական թատրոն	.	.	1	—
4.	Իլուզի, նօրս	.	.	—	30
5.	Լիր Արթայ	.	.	—	5
6.	Գոյլ	.	.	—	3
7.	Թառղթ և հին դրքեր (Օստրոգորսկի)	.	.	—	5



ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

6006426

2013



